ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.04.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
ՍՑ-ԼՕ-2019/21 ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ. Շահնազարյանի՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու և «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին ՍՑ-ԱՄ-2019/19 ընթացակարգով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով մինչև ԵԴ/1832/02/19 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը Բողոքներ քննող անձ Միեր Անանյանին որևէ գործողություն կատարելն արգելելու վերաբերյալ 18.02.2019թ. կայացված որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով, որ 25.01.2019թ. թիվ ՍՑ-ԱՄ-2019/19 ընթացակարգը 18.04.2019թ. մակագրվել է ինձ և տրվել նոր թիվ ՍՑ-ԼՕ-2019/21 ծածկագիրը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

Կասեցնել ՍՑ-ԼՕ-2019/21 (ՍՑ-ԱՄ-2019/19) ծածկագրով ընթացակարգի քննությունը՝ մինչև ԵԴ/1832/02/19 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ